

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

Ա

մակարդակ

Ա 1 Հատակագծի կամ քարտեզի պայմանական նշանների համակարգը կոչվում է.

- 1) մասշտաբ
- 2) հորիզոնական
- 3) լեգենդա
- 4) մակագրություն

Ա 2 Արեգակին ամենամոտ գտնվող մոլորակն է.

- 1) Սատուրնը
- 2) Մերկուրին
- 3) Վեներան
- 4) Մարսը

Ա 3 Երկու կետերի ուղիղ գծով իրական հեռավորությունը տեղանքում 30կմ է, իսկ քարտեզի վրա՝ 5սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1: 600.000
- 2) 1: 3000.000
- 3) 1: 1.800.000
- 4) 1: 600.000

Ա 4 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Երկիրը սեփական լույսը ստանում է Լուսնից:
- 2) Իր առանցքի շուրջը Երկիրը պտտվում է 1 ժամում:
- 3) Միջօրեականներն իրար հավասար են:
- 4) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է Գրինվիչի միջօրեականով:

Ա 5 Օվկիանոսի հատակում տեղի ունեցած երկրաշարժից առաջացած ալիքը կոչվում է.

- 1) թայֆուն
- 2) ցունամի
- 3) օվկիանոսային հոսանք
- 4) տոռնադո

Ա 6 Երկրի ընդերքում երկու ջրամերժ շերտերի մեջ գտնվող ճնշումնային ջրերը կոչվում են.

- 1) գրունտային ջրեր
- 2) արտեզյան ջրեր
- 3) հանքային ջրեր
- 4) գեյզերներ


Ա 7 Ցամաքի բնական այն համալիրը, որը ձևավորվել է միևնույն երկրաբանական կառուցվածքի, ջերմության և խոնավության, հողաբուսական ծածկի գուգակցման շնորհիվ կոչվում է.

- 1) կենսոլորտ
- 2) աշխարհագրական թաղանթ
- 3) կլիմայական գոտի
- 4) բնական զոնա

Ա 8 Բևեռային ցերեկների տևողությունը բևեռի վրա.

- 1) 1 օր է
- 2) 1 շաբաթ է
- 3) 1 ամիս է
- 4) 6 ամիս է

Ա 9 Ո՞ր կլիմայական մարզում է գտնվում նկարում պատկերված Բ բնակավայրը:



- 1) մերձհասարակածային կլիմայի
- 2) մերձարևադարձային խոնավ կլիմայի
- 3) միջերկրածովային կլիմայի
- 4) բարեխառն խոնավ կլիմայի

Ա 10 Բնութագրումով որոշել հողմահարման տեսակը.

Այդ հողմահարումը տեղի է ունենում բույսերի և կենդանիների ներգործությամբ: Հողմահարման ո՞ր տեսակն է.

- 1) երկրաբանական
- 2) քիմիական
- 3) օրգանական
- 4) ֆիզիկական

Ա 11 Հյուսիսային Ամերիկայում աճում են.

- 1) կաղնին և էվկալիպտը
- 2) բանանը և ֆիկուսը
- 3) փետրախոտը և սեքվոյան
- 4) սեյբան և բաոբաբը

Ա 12 Ադի լճեր են.

- 1) Իսիկ Կուլը և Լադոգան
- 2) Որմիան և Վանը
- 3) Տիտիկական և Տանգանիկան
- 4) Մեծ Արջի և Վենեռնը

Ա 13 Այդ սառը ծովային հոսանքն իր նպաստն է բերել Ատակամա անապատի առաջացմանը: Այդ հոսանքն է.

- 1) Պերուական
- 2) Արևմտյան քամիներինը
- 3) Կանարյանը
- 4) Մոնալիինը

Ա 14 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 2) Հյուսիսային Ամերիկան Գրենլանդիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 3) Ամազոն գետը հորդանում է ամռանը:
- 4) Հյուսիսային Ամերիկայում ամենամեծ տարածում ունի անապատների և կիսաանապատների զոնան:

Ա 15 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Բիսկայան ծոցի ջրերը ողողում են Պիրենեյան թերակղզու հարավային ափերը:
- 2) Մեծ Ավստրալական և Կարպենտարիայի ծոցերը պատկանում են Հնդկական օվկիանոսին:
- 3) Պարսից ծոցը Օմանի ծոցից բաժանվում է Բոսֆորի նեղուցով:
- 4) Հուդզոնի ծոցում է գրանցվում ամենաբարձր մակընթացությունն աշխարհում:

Ա 16 Տրված «ծով-կղզի» զույգից ընտրել ճիշտը.

- 1) Արաբական- Շրի Լանկա
- 2) Կարիբյան-Ճամայկա
- 3) Սև-Մալթա
- 4) Դեղին-Թայվան

Ա 17 Տրված «հարթավայր-աշխարհամաս» գույգից ընտրել ճիշտը.

- 1) Կոլխիդայի-Ասիա
- 2) Թուրանի-Եվրոպա
- 3) Արևմտասիբիրական-Եվրոպա
- 4) Լենքորանի-Եվրոպա

Ա 18 Հարավային Ամերիկայում բնակվող կենդանիներ են.

- 1) կոալան և եքիդնան
- 2) լաման և նանդու ջայլամը
- 3) յակը և կոբրան
- 4) բորենին և այծքաղը

Ա 19 Հյուսիսային Ամերիկայի քարտեզի վրա n°ր տառով է նշված Մեծ Արջի լիճը:

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

Ա 20 Հյուսիսային Ամերիկայի քարտեզի վրա n°ր տառով է նշված Պանամա պետությունը:

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը



- Ա 21 Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումն ըստ բնակավայրերի ու դրանց համակարգերի, այսինքն բնակավայրերի ցանցը կոչվում է.
- 1) ուրբանիզացում
 - 2) բնակչության խտություն
 - 3) ագլոմերացիա
 - 4) տարաբնակեցում
- Ա 22 Մի շարք զարգացող երկրներում ցորենի և բրնձի բարձր բերքատու տեսակների ներդրման շնորհիվ՝ նշված մշակաբույսերի բրքատվության բարձրացումը և համախառն բերքի կտրուկ աճը կոչվում է.
- 1) գյուղատնտեսության ինտենսիվացում
 - 2) գյուղատնտեսական հողաբարելավում
 - 3) կանաչ հեղափոխություն
 - 4) համակեցությունների արդյունավետություն
- Ա 23 Այդ երկրի տարածքում է գտնվում Կրակատաու հրաբուխը: Այն բնական կաուչուկ արտահանող խոշոր երկրներից է: Այդ երկիրն է.
- 1) Կանադան
 - 2) Ֆիլիպինները
 - 3) Ճապոնիան
 - 4) Ինդոնեզիան
- Ա 24 Երկրում ածխի պաշարները կազմում են 24մլրդ. տ, իսկ տարեկան արդյունահանման չափը՝ 480 մլն. տ: Արդյունահանման նույն չափերի պահպանման դեպքում, ածխի սեփական պաշարները քանի՞ տարի կբավականացնեն երկիրն.
- 1) 40
 - 2) 50
 - 3) 60
 - 4) 70
- Ա 25 Տրված «ժողովուրդ-տարածաշրջան» գույգերից ընտրել սխալը.
- 1) մեքսիկացիներ-Լատինական Ամերիկա
 - 2) մոնղոլներ-Կենտրոնական Ասիա
 - 3) հրեաներ-Հարավ-Արևելյան Ասիա
 - 4) ճապոնացիներ-Արևելյան Ասիա
- Ա 26 Տրված «պետություն-պետական տարածքային կառուցվածք» գույգերից ընտրել ճիշտը.
- 1) Մեքսիկա-ունիտար
 - 2) Ճապոնիա-դաշնային
 - 3) Բրազիլիա-դաշնային
 - 4) Կանադա-ունիտար

Ա 27 Ջրոսաշրջությամբ առավել զարգացած երկրներ են.

- 1) Թուրքիան և Իրաքը
- 2) Իտալիան և Իսպանիան
- 3) Ճապոնիան և Չինաստանը
- 4) ԱՄՆ-ը և Կանադան

Ա 28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մարդատար ավտոմեքենաշինությամբ առաջատար է Գերմանիան:
- 2) Գյուղատնտեսական մեքենաների արտադրության ձեռնարկությունները տեղաբաշխվում են սպառման շրջաններում:
- 3) Ջարգացող երկրները մեքենաշինական արտադրանքի գլխավոր արտահանողներն են:
- 4) Ռուսաստանում ծանր մեքենաշինական ձեռնարկությունները տեղաբաշխված են խոշոր նավահանգիստներում:

Ա 29 «Մեծ ութնյակի» անդամ են.

- 1) Բրազիլիան և Հորդանանը
- 2) Իտալիան և Ֆրանսիան
- 3) Ավստրիան և Շվեյցարիան
- 4) Ֆիլիպինները և Ճապոնիան

Ա 30 Իսլամ դավանող երկրներ են.

- 1) Արգենտինան և Մեքսիկան
- 2) Վիետնամը և Լատսը
- 3) Ալբանիան և Հորդանանը
- 4) Հունգարիան և Ռումինիան

Ա 31 Տրված «պետություն-նավահանգիստ» զույգից ընտրել սխալը.

- 1) Ճապոնիա-Յոկոհամա
- 2) Չինաստան-Դալյան
- 3) Ռուսաստան-Օդեսա
- 4) Գերմանիա-Համբուրգ

Ա 32 Ընտրել սխալ պատասխանը.

- 1) Սպասարկող ճյուղերին անվանում են նաև երրորդային սեկտոր:
- 2) Միջազգային զբոսաշրջությունը առավել արագ զարգացող բնագավառներից է:
- 3) Միջազգային զբոսաշրջության գլխավոր տարածաշրջանը Եվրոպան է:
- 4) Միջազգային առևտրում անընդհատ ավելանում է հումքի և պարենի բաժինը:

Ա 33 Իրենց բաղադրության մեջ պարունակվող տարբեր նյութերի միջոցով մարդու օրգանիզմի վրա ցավազրկող, հանգստացնող, հակաբորբոքային ազդեցություն են ունենում.

- 1) տեխնիկական բույսերը
- 2) դեկորատիվ բույսերը
- 3) դեղաբույսերը
- 4) կերաբույսերը

Ա 34 Ավտոմոբիլների արտադրությամբ առաջատար են.

- 1) Ուկրաինան և Ռումինիան
- 2) Ֆրանսիան և Գերմանիան
- 3) Մեքսիկան և Նիկարագուան
- 4) Աֆղանստանը և Պակիստանը

Ա 35 Հոսք չունեցող լիճ է.

- 1) Ուրմիան
- 2) Սևանը
- 3) Գալլատուն
- 4) Փարվանան

Ա 36 Տրված «գետ-ավազան» զույգերից ընտրել սխալը.

- 1) Եփրատ-Պարսից ծոց
- 2) Ճորոխ-Սև ծով
- 3) Արաքս-Կասպից ծով
- 4) Կուր-Միջերկրական ծով

Ա 37 Կուլտուր-ոռոգելի հողերը տարածված են.

- 1) Արարատյան դաշտում
- 2) Շիրակի դաշտում
- 3) Սևանի ավազանում
- 4) Որոտանի հովտում

Ա 38 Ընտրել սխալ պատասխանը.

- 1) ՀՀ տարածքում հաշվում են մոտ 12հազ. կենդանատեսակ:
- 2) Հակական վայրի ոչխարը և բեզարյան այծը էնդեմիկ են:
- 3) ՀՀ անտառային գոտու կենդանատեսակների մեջ գերակշռում են սողունները:
- 4) Արփի լճում տարածված է ծածան ձկնատեսակը:

Ա 39 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) ՀՀ զինու-կոնյակի արտադրությունը տեղաբաշխված է խաղողագործական շրջաններում:
- 2) ՀՀ նրգի և բանջարեղենի պահածոների արտադրությունը ձևավորվել է 19-րդ դարում:
- 3) ՀՀ պանրի արտադրությունը տեղաբաշխված է Երևան-Այրում երկաթուղու երկայնքով:
- 4) Սպիտակի շաքարի գործարանը սպասարկում է ՀՀ ներքին պահանջարկի 50%-ը:

Ա 40 ՀՀ անասնապահական արտադրանքի ծավալում առաջատար է.

- 1) խոշոր եղջերավոր անասնապահությունը
- 2) մանր եղջերավոր անասնապահությունը
- 3) խոզաբուծությունը
- 4) թռչնաբուծությունը

Ա 41 Լոռու մարզում գունավոր մետաղաձուլության կենտրոններ են.

- 1) Ախթալան և Տաշիրը
- 2) Ստեփանավանը և Շամլուղը
- 3) Ալավերդին և Ախթալան
- 4) Սպիտակը և Վանաձորը

Ա 42 ՀՀ-ում ամենաբարձր ուրբանիզացման մակարդակ ունեցող մարզն է.

- 1) Սյունիքը
- 2) Արմավիրը
- 3) Արագածոտնը
- 4) Կոտայքը

Ա 43 ՀՀ երկաթուղիների ընդհանուր երկարությունը կազմում է.

- 1) 500կմ
- 2) 850կմ
- 3) 1250կմ
- 4) 1410կմ

Ա 44 Բնական ռեսուրսների գնահատման տեսակ չէ.

- 1) տնտեսականը
- 2) քաղաքականը
- 3) էկոլոգիականը
- 4) սոցիալականը

Ա 45 Բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հանդակներով առաջատար է.

- 1) Ճապոնիան
- 2) Եգիպտոսը
- 3) Արգենտինան
- 4) Մեծ Բրիտանիան

Ա 46 Համաշխարհային օվկիանոսը աղտոտում է.

- 1) ջրի աղազերծումը
- 2) մարիկուլտուրայի զարգացումը
- 3) նավթի և գազի հանույթը շելֆից
- 4) մակընթացային էլեկտրակայանների կառուցումը

Ա 47 Հողային ռեսուրսների պահպանության համար անհրաժեշտ է.

- 1) անընդհատ արածեցնել մանր եղջերավոր անասուններ
- 2) ստեղծել դաշտապաշտպան անտառաշերտեր
- 3) թեք լանջերը հերկել երկայնակի
- 4) բազմացնել կրծողներ

Ա 48 Գիտության այն ուղղությունը, որը զբաղվում է բնական և աշխարհագրական միջավայրում մարդու գործունեության հետևանքով առաջացած փոփոխությունների հետազոտությամբ և կառավարումով կոչվում է.


- 1) սոցիոլոգիա
- 2) գենետիկա
- 3) էկոլոգիա
- 4) տեխնոլոգիա

Ա 49 Քարտեզի վրա Արզնի հանքային աղբյուրը n°-ը տառով է նշված.

- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

Ա 50 Քարտեզի վրա n°-ը տառով է նշված Չանգե-գուրի լեռնաշղթան.

- 1) Ե
- 2) Զ
- 3) Է
- 4) Ը



Ա 51 Ընտրել պետություն մայրաքաղաք ճիշտ զուգորդությունը

- 1) Մոլդովա-Կիև
- 2) Ուկրաինա-Լյվով
- 3) Շվեյցարիա-Ցյուրիխ
- 4) Բելգիա-Բրյուսել

Ա 52 Ընտրել պետություն մայրցամաք սխալ զուգորդությունը

- 1) Ռուանդա-Աֆրիկա
- 2) Լյուքսեմբուրգ-Հարավային Ամերիկա
- 3) Կանադա-Հյուսիսային Ամերիկա
- 4) Էքվադոր-Հարավային Ամերիկա

Բ

մակարդակ

Բ 1 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Երկրագնդի վրա օրվա ընթացքում գիշերվա և ցերեկվա կանոնավոր հերթափոխ կատարվում է միայն բևեռներում:
- 2) Հունիսի 22-ին ցերեկը և գիշերը հավասար են հարավային բևեռային շրջագծի վրա:
- 3) Հասարակածից հյուսիս, հյուսիսային կիսագնդում և հասարակածից հարավ, հարավային կիսագնդում տարվա եղանակներն իրար հակառակ են լինում:
- 4) Յուրաքանչյուր ժամային գոտի երկու միջօրեականների միջև զբաղեցնում է 24° :

Բ 2 Հյուսիսային բևեռի աշխարհագրական լայնությունն է.

- 1) Հս.լ. 60°
- 2) Հվ.լ. 45°
- 3) Հվ.լ. $66^\circ 30'$
- 4) Հս.լ. 90°

Բ 3 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Քարոլորտի առավելագույն հզորությունը 80 կմ է:
- 2) Տորֆը հրային ծագման ապար է:
- 3) Նիդեռլանդները տարեկան 3մմ-ով իջնում է:
- 4) Հյուսիսային և Հարավային Ամերիկաները առաջացել են Գոնդվանա մայրցամաքի մասնատումից:

Բ 4 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ գուգորդումը.

- 1) տունդրա- մամուռ, քարաքոս-գետածի
- 2) տափաստան-շյուղախոտ, փետրախոտ-դաշտամուկ, արջամուկ
- 3) սավաննա- ակացիա, բաոբաբ-գորշ արջ, խլահավ
- 4) խոնավ հասարակածային անտառներ-բարդի, լորենի-կապիկ, ցեցե ճանճ

Բ 5 Այդ կլիմայական գոտում ամռանը տիրապետում են տաք և չոր, իսկ ձմռանը բարեխառն համեմատաբար մեղմ օդային զանգվածը: Այդ կլիմայական գոտին է.

- 1) մերձհասարակածային
- 2) արևադարձային
- 3) մերձարևադարձային
- 4) բարեխառն

Բ 6 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մեծ Ջրբաժան լեռնաշղթան ունի հրաբխային ծագում:
- 2) Ուրալյան լեռները մտնում են Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալի մեջ:
- 3) Պադանի դաշտավայրը առաջացել է պլատֆորմի վրա:
- 4) Աֆրիկայի ծայր հարավում ձգվում են հին ծալքավորման Կապի լեռները:

Բ 7 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Գետահովտի այն մասը, որը գետի հորդացման և վարարման ժամանակ ծածկվում է գետի ջրերով կոչվում է ողողատ:
- 2) Գետաբերաններում կուտակված նստվածքները առաջացնում են էստուարներ:
- 3) ՀՀ-ի գետերը հորդանում են ձմռանը:
- 4) Հարթավայրերում գետերի ջրբաժան գիծը հստակ է արտահայտված:

Բ 8 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Շերտավոր ամպերը մթնոլորտային տեղումներ չեն առաջացնում:
- 2) Փետրավոր ամպերը ձևավորվում են մինչև 2կմ բարձրությունների վրա:
- 3) Օդի ջերմաստճանի բարձրացմանը զուգահեռ աճում է այն հագեցնելու համար անհրաժեշտ ջրային գոլորշիների քանակը:
- 4) Կույտավոր ամպերից ամռանը թափվում է ցող, իսկ ձմռանը՝ եղյամ:

Բ 9 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Սև մետալուրգիայի հումքը պղնձի հանքաքարն է:
- 2) Սև մետալուրգիայի վառելիքը կոքսացվող ածուխն է:
- 3) Գունավոր մետալուրգիայի հումքը երկաթի հանքաքարն է:
- 4) Գունավոր մետալուրգիայի վառելիքը նավթն է:

Բ 10 Ո՞ր պետության տնտեսության ճյուղային կառուցվածքն է պատկերված.

- 1) Չինաստան
- 2) Գերմանիա
- 3) Վրաստան
- 4) Հնդկաստան



Բ 11 Այդ երկիրը սահմանադրական միապետություն է և նախկինում եղել է խոշոր գաղութատիրական պետություն: Մայրաքաղաքը գտնվում է երկրի կենտրոնական մասում:

- 1) Իսպանիա
- 2) Բելգիա
- 3) Դանիա
- 4) Ճապոնիա

Բ 12 Ընտրել ճիշտ պատասխանը

- 1) Պարսիկների պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքին:
- 2) Ադրբեջանցիները պատկանում են կովկասյան լեզվաընտանիքին:
- 3) Օսերը պատկանում են ալթայան լեզվաընտանիքին:
- 4) Աֆղանները պատկանում են ալթայան լեզվաընտանիքին:

Բ 13 Ընտրել սխալ պատասխանը

- 1) Իսպանիան սահմանադրական միապետություն է:
- 2) Իտալիան դաշնային պետություն է:
- 3) Բալկանյան թերակղզում է գտնվում Ալբանիա պետությունը:
- 4) Ֆրանսիան նախագահական հանրապետություն է:

Բ 14 Ընտրել ճիշտ պատասխանը

- 1) Աշոցքի սարավանդը գտնվում է Ջավախքի և Գուգարաց լեռների միջև:
- 2) Եղնախաղի լեռները ունեն ծալքաբեկորավոր կառուցվածք:
- 3) Արամազդը Բարգուշատի լեռների ամենաբարձր գագաթն է:
- 4) Փամբակի լեռները ձգվում են Ջաջուռի լեռնանցքից մինչև Պուշկինի լեռնանցք:

Բ 15 Ընտրել «օգտակար հանածո-հանքավայր» զույգերից ճիշտը.

- 1) ոսկի-Աբովյան
- 2) պղնձահրաքար-Կապան
- 3) երկաթ-Ալավերդի
- 4) մեֆեղինային սիենիտ-Եղեգնաձոր

Բ 16 Ընտրել «մայրցամաք-կենդանի» անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.

- | | |
|------------------------|------------------|
| 1. Հյուսիսային Ամերիկա | ա. Էմու ջայլամ |
| 2. Հարավային Ամերիկա | բ. նանդու ջայլամ |
| 3. Ավստրալիա | գ. ցեցե ճանճ |
| 4. Աֆրիկա | դ. կարիբու |

- 1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
- 4) 1-գ, 2-գ, 3-բ, 4-ա

Բ 17 Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը առավել նպաստել է.

- 1) Որակյալ աշխատանքային ռեսուրսների առկայությունը:
- 2) Ընդարձակ վարելահողերի առկայությունը:
- 3) Մեղմ և խոնավ կլիման:
- 4) Բարձր բերքատու մշակաբույսերի առկայությունը:

Բ 18 Ընտրել Որոտանի համակարգի ջրամբարների շարքը ակունքից գետաբերան ճիշտ հաջորդականությամբ.

- 1) Շամբի, Սպանդարյանի, Տոլորսի
- 2) Տոլորսի, Սպանդարյանի, Շամբի
- 3) Սպանդարյանի, Տոլորսի, Շամբի
- 4) Տոլորսի, Շամբի, Սպանդարյանի

Բ 19 Ի՞նչը ընհանուր չէ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի համար:

- 1) Գերիշխում են սևահողային սարավանդները:
- 2) Զգալի են ռելիեֆի հրաբխային ձևերը:
- 3) Զարգացած է ձկնորսությունը:
- 4) Շատ են բարձր լեռնային արոտավայրերը:

Բ 20 ՀՀ առավել հայտնի առողջարանային քաղաքներն են:

- 1) Վարդենիսը և Գավառը
- 2) Գորիսը և Կապանը
- 3) Սիսիանը և Վայքը
- 4) Իջևանը և Ջերմուկը

Բ 21 Ջրային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

- 1) Սաուդյան Արաբիան և Իրանը
- 2) Եգիպտոսը և Լիբիան
- 3) Հորդանանը և Եմենը
- 4) Կանադան և Ֆինլանդիան


Բ 22 ՀՀ-ում հողերի էրոզիայի զարգացմանը նպաստում է.

- 1) Լեռնալանջի լայնակի հերկումը
- 2) Լեռնալանջի ուղղահայաց (երկայնակի) հերկումը
- 3) Լանջի խոտածածկի և անտառների հրդեհները
- 4) Սառցադաշտերի գործունեությունը

Բ 23 ՀՀ-ում հողերն աղտոտող հիմնական նյութերն են.


- 1) Շինարարական և արդյունաբերական կոշտ թափոնները
- 2) Քիմիական պարարտանութերը
- 3) Օրգանական պարատանյութերը
- 4) Գլաբարերը

- 1) Բարեխառն ծովային
- 2) Մերձարևադարձային միջերկրածովային
- 3) Արևադարձային ցամաքային
- 4) Մերձարևադարձային ցամաքային



Բ 25 ՀՀ գյուղատնտեսության ո՞ր ենթաճյուղի մասնագիտացման շրջանն է պատկերված.

- 1) Այգեգործություն
- 2) Խոզաբուծություն
- 3) Կարտոֆիլի մշակություն
- 4) Շաքարի ճակնդեղի մշակություն



Բ 26 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 50° , արլ. ե. 40° : Որոշել տվյալ վայրի, ժամային գոտու համարը:

- 1) 3
- 2) 11
- 3) 7
- 4) 5

Բ 27 Գետի ջրի արագությունը 2 մ/վրկ է, կենդանի կտրվածքի մակերեսը 11 մ²: Որոշել գետի ծախսը:

- 1) 22
- 2) 11
- 3) 26
- 4) 34

Բ 28 Երկրում բնակչության թիվը 3 մլն մարդ է, խտությունը՝ 80 մարդ/կմ²: Որոշել երկրի տարածքի մեծությունը:

- 1) 47500
- 2) 50260
- 3) 37500
- 4) 12000